

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (գրադմուսքի) անվանումը	ԱՅԳԵՊԱՆ (ԱՅԳԵԳՈՐԾ)
I. Դերը	Այգեգործը կազմակերպում և իրականացնում է այգու տարածքի մաքրման, խնամքի, ծառերի ու թփերի տնկման, սերմնաբույսերի ցանքի, կանաչապատ տարածքների և ծառուղիների, սիգամարգերի հիմնման և ձևավորման, կանաչ պարիսպների, դարավանդների, փոքրիկ ջրամբարների, արհեստական ջրվեժների կառուցման, այգու մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի, ագրոտեխնիկական և բերքահավաքի աշխատանքները:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները օգտագործել ժամանակակից այգեգործական գործիքներ ու սարքավորումներ:	
Աշխատանքային գործընթացը	Այգեգործը աշխատում է ժամանակակից այգեգործական՝ ձեռքի աշխատանքի հնարավորությամբ կամ մեքենայական գործիքներով ու սարքավորումներով (փխրեցնող, հերկող, հնձող, ոռոգող, սրկող)՝ պահպանելով յուրաքանչյուր աշխատանքին բնորոշ անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	<p>Հողի մշակության, այգեգործական գործիքների ու սարքավորումների արդյունավետ օգտագործում</p> <ul style="list-style-type: none"> • հերկող և փխրեցնող գործիքներով մշակում է հողը. • հնձող գործիքներով հնձում է այգու ծառուղիների, միջնակների խոտը, հարդարում, ձևավորում գազոնները. • ընտրում և օգտագործում է կաթիլային ոռոգման և սրկման սարքավորումները:
Խնդիրների բնագավառ 2. Կատարել նախապատրաստական աշխատանքներ այգու հողատարածքում, այգու տարածքի ռեյիեֆային ձևավորումներ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Այգեգործը, կիրառելով համապատասխան գործիքներ և սարքավորումներ, փորում և փխրեցնում է հողը, մաքրում քարերից, մոլախոտերից և այլ բուսական մնացորդներից, • ըստ անհրաժեշտության պատրաստում է տարբեր հողախառնուրդներ, • ծաղկանոց կամ սիգամարգ ստեղծելու համար ըստ անհրաժեշտության ձևավորում է հողաթմբեր, դարավանդներ և այլ ռեյիեֆային միկրոլանդշաֆտներ, • բացում է ջրահեռացման առվակներ, պատրաստում դրենաժներ, • ծառուղիների արահետների հողային ծածկույթը հեռացնում և նախապատրաստում է հաջորդ գործընթացների համար:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Այգու հողատարածքը պատրաստված է հետագա աշխատանքների համար, հողը մաքուր է, հողի բերրի շերտը նորմալ պահպանվում է, • ըստ կոնկրետ նպատակների պատրաստված են համապատասխան հողախառնուրդները, • ապահովվում է տարածքից ավելորդ ջրերի հեռացումը առվակների և դրենաժների միջոցով, • այգու տարածքում պատրաստված են անհրաժեշտ ձևավորումները, • արահետները, ծառուղիները մաքուր են, վերանորոգված, վերականգնված:
Խնդիրների բնագավառ 3. Տնկել ծառեր, թփեր, ցանել և սածիլել ծաղիկներ, ձևավորել կանաչ տարածքներ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Այգեգործը ծառերի և թփերի տեսակներին համապատասխան փորում է ծառափոսերը՝ ապահովելով փոսի խորությունը և պահպանելով դրանց միջև անհրաժեշտ հեռավորությունը, տնկում է տնկիները, ապահովելով դրանց դիրքի կայունությունը՝ կատարելով առաջին խնամքի գործողությունները: • Այգեգործը, հաշվի առնելով ծաղիկների տարբեր տեսակների ծաղկման ժամանակները, կատարում է սերմերի ցանքը, տնկում է ծաղկասածիլները, հիմնում է սիգամարգեր՝ ապահովելով կանաչ գոտու ամբողջականությունն ու

	<p>ներդաշնակությունը:</p> <ul style="list-style-type: none"> Այգեգործը կատարում է ցանքսի և սածիլների առաջնային խնամքը, ինչով ապահովում է դրանց նորմալ ծլելը, սածիլների կաչողականությունը, անհրաժեշտության դեպքում կատարում է ցանկացած ծաղկաբույսերի նոսրացում, վերատնկում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> Ծառերի և թփերի տնկման, ծաղիկների սերմերի ցանքի և սածիլների տնկման աշխատանքները կատարված են հանձնարարականներին/պատվերին և ագրոտեխնիկական կանոններին համապատասխան, նախնական խնամքի աշխատանքները նորմալ և ճիշտ են կատարվել: Կանաչ տարածքները ձևավորված են գեղեցիկ և այգու ընդհանուր տեսքին ներդաշնակ: Տնկիները տվել են վերած, ցանված սերմերը նորմալ ծլել են:

Խնդիրների բնագավառ 4. Այգու մշակաբույսերի ոռոգում և խնամք

Աշխատանքային գործընթացը	<p>Այգեգործն անհրաժեշտ ժամկետներում կատարում է հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> ծառերի ու թփերի էտ և ձևավորում, այգու սնուցում, պարարտացում, բուժումներ այգու և մշակաբույսերի ոռոգում և խնամք, ծառերի պատվաստում, անհրաժեշտության դեպքում՝ փոշոտիչների ընտրություն և արհեստական փոշոտում. այգու ծխահարում՝ ցրտից պաշտպանության նպատակով:
Կատարման չափանիշներ	<p>Հանձնարարականներով առաջադրված և ժամանակացույցով նախատեսված ագրոտեխնիկական աշխատանքները կատարված են ժամանակին, անհրաժեշտ ծավալներով, պահպանված են կատարման տեխնոլոգիաները.</p> <ul style="list-style-type: none"> պահպանում է էտի և ձևավորման ժամկետները և տեխնոլոգիան՝ մշակաբույսի տեսակին համապատասխան, սնուցման և պարարտացման միջոցով ապահովում է հողում համապատասխան մեկնաբույսերի առկայությունը, ապահովում է յուրաքանչյուր մշակաբույսի՝ ջրի պահանջմունքի նորմաներին համապատասխան ոռոգումը: Ապահովում է միջբնային տարածքների փորը, քաղիանը, փխրեցումը, ապահովում է պատվաստվող բույսերի՝ պատվաստակալների խնամքը, նախապատրաստումը և պատվաստումը, անհրաժեշտության դեպքում կատարում է արհեստական փոշոտում այն բույսերի համար և այն վայրերում, որտեղ թույլ են բնական փոշոտման հնարավորությունները, ճիշտ է կատարում փոշոտիչների ընտրությունը, հետզարևանային ցրտահարության վտանգից պաշտպանվելու նպատակով անհրաժեշտության դեպքում կատարում է այգիների ծխահարում:

Խնդիրների բնագավառ 5. Այգու վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի կազմակերպում

Աշխատանքային գործընթացը	<p>Այգեգործը պետք է</p> <ul style="list-style-type: none"> ճանաչի այգու ծառերի, թփերի, ծաղիկների, այլ բուսատեսակների հիվանդությունների նշանները, կատարի հիվանդությունների և վնասատուների դեմ կանխարգելման, և բուժման աշխատանքներ, ճանաչի տվյալ բուսատեսակին բնորոշ վնասատուներին, նկատի նրանց հանդես գալու հիմնական նախանշանները, իմանա դրանց դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ժամկետները: Ճանաչի այգու հիմնական մոլախոտերը և կազմակերպի դրանց դեմ պայքարի, բուժման աշխատանքներ (մեխանիկական և քիմիական)՝ նախապատվությունը տալով բնապահպանական առումով անվնաս մեթոդներին:
--------------------------------	---

	<ul style="list-style-type: none"> • թունաքիմիկատներով աշխատելիս պահպանի անվտանգության հիմնական կանոնները, • կատարի ծառերի ու թփերի անհրաժեշտ սրսկումները, անհրաժեշտ ժամկետներում կրալուծույթով սպիտակեցնի, ծառաբները, հեռացնի վնասված ճյուղերն ու հիվանդ տերևները, • աշխատանքները կատարելիս պահպանի անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • ճիշտ է տարբերակվում այգու մշակաբույսերի հիվանդությունների հիմնական և նախնական նշանները, ըստ փուլերի և ժամկետների կատարում է հիվանդությունների և վնասատուների դեմ կանխարգելման նախնական ու հետագա բուժման աշխատանքներ, • ճանաչում է տվյալ բուսատեսակին բնորոշ հիմնական վնասատուներին, նկատում է նրանց հանդես գալու նախանշանները, գիտի դրանց դեմ պայքարի հիմնական ժամկետներն ու միջոցները՝ մեխանիկական (վարակված ճյուղերի հեռացում) և քիմիական (սրսկումներ): • ճանաչում է այգու հիմնական մոլախոտերը և կազմակերպում է դրանց դեմ պայքարի, բուժման աշխատանքներ (մեխանիկական, քիմիական և կենսաբանական), • վնասատուների, հիվանդությունների, մոլախոտերի դեմ պայքարելիս պահպանում է անվտանգության հիմնական կանոնները, կիրառում է բնապահպանական առումով անվնաս մեթոդներ:

Խնդիրների բնագավառ 6. Մաքրել և բարեկարգել այգին

Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Այգեգործը մաքրում է այգու տարածքը, հնձում է սիգամարգերը, հավաքում և տեղափոխում է բուսական մնացորդները՝ թափոնները, չորացած և հնձած զանգվածները, • ձևավորում է ծառուղիների եզրաշերտերը, հարթեցնում և տափանում է ավազն ու խիճը, • հարդարում է կանաչապատման նպատակով տնկած թփերը, հետևում է ծաղկանոցների և ծաղկաթմբերի վիճակին, կատարում դրանց գեղեցիկ տեսքն ապահովող աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Պահպանվում են այգու մաքրման և բարեկարգման աշխատանքների կատարման ժամկետները, բուսական մնացորդները՝ չորացած և հնձած զանգվածները, որն օգտագործվում է կենսահումուսի պատրաստման համար, • ծառուղիների ձևավորումը և հարդարումը կատարված է համաչափ եզրագծերով, հարթեցված վերին շերտով, • ծաղկանոցները և ծաղկաթմբերը ունեն գեղեցիկ, խնամված տեսք:

Խնդիրների բնագավառ 7.

Բերքահավաք և այգու նախապատրաստում ձմեռացման

Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Այգեգործը պետք է ճանաչի բերքի տարբեր տեսակների հասունացման նշաններն ու ժամկետները, ժամանակին հավաքի հասունացած բերքը, ծաղիկների սերմերը, տեսակավորի դրանք, անհրաժեշտության դեպքում՝ պահեստավորի: • Այգեգործը պետք է կարողանա այգին ձմեռման նախապատրաստելու աշխատանքները կատարել ժամանակին՝ պահպանելով անհրաժեշտ կանոնները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ է ճանաչում տարբեր ծառերի և թփերի բերքի հասունության նշաններն ու ժամկետները, բերքը հավաքելիս պահպանվում են տարբեր ծառերի և թփերի հետ աշխատելու առանձնահատկությունները՝ խուսափելու համար բերքի կորուստներից: • Այգեգործը կարողանում է այգին ձմեռման նախապատրաստելու նպատակով ծառերի, թփերի և տնկիների, ծաղիկների առանձին տեսակները ծածկել, փաթաթել կամ տեղափոխել:

III. Պատասխանատվությունը (անմիջական պատասխանատվության շրջանակ)	<p>Այգեգործը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> • այգու հիմնման, թարմացման, • խնամքի, սպասարկման, պաշտպանության, • վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի, • ագրոտեխնիկական աշխատանքները ժամանակին կատարելու, • բերքը հավաքելու, տեսակավորելու և պահեստավորելու, • մեքենաները, կյուլթերն ու տրամադրված միջոցները խնայողաբար և արդյունավետ օգտագործելու, • ժամանակակից այգեգործական գործիքներով ու սարքավորումներով աշխատելու, սարքավորումներն ու գործիքները խնամքով օգտագործելու • աշխատանքի անվտանգության կանոնները պահպանելու համար:
IV. Լեզուները	<p>- հայերեն, - օտար լեզու՝ մասնագիտական հաղորդակցության համար</p>
V. Համակարգիչը	<p>MS Word</p>
VI. Գիտելիքները	<p>Այգեգործը իր մասնագտական գործունեության համար պետք է նվազագույն գիտելիքներ ունենա</p> <ul style="list-style-type: none"> • ագրոնոմիայի հիմունքներից, • բուսաբուծությունից, ծաղկաբուծությունից, պտղաբուծությունից, • այգեգործական գործիքներից և սարքավորումներից, • աշխատանքների մեքենայացումից, • կանաչ շինարարության հիմունքներից, • բույսերի պաշտպանությունից, բնապահպանությունից, աշխատանքի անվտանգությունից: <p>Նշված բնագավառներում պահանջվող գիտելիքների ծավալը պայմանավորվում է կարողությունների և հմտությունների սահմանմամբ:</p>
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> • այգեգործական գործիքների, փոքրածավալ մեքենաների և սարքավորումների օգտագործման հմտություններ, • գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի աճեցման համար հողի նախապատրաստման կարողություններ • այգիներում պարզ կառույցների պատրաստման, այգու ձևավորման, սիզամարգերի ու ծաղկանոցների հիմնադրման, այգու բնական կանաչ տարածքների և սիզամարգերի հարդարման հմտություններ, • այգիներ հիմնելու համար ծառերի և թփերի սերմերի, կտրոնների, տնկանյութի նախապատրաստման հմտություններ • այգիներում ծառերի ու թփերի տնկման, խնամքի և ձևավորման հմտություններ , • այգիներում ծառերի ու թփերի Էտի և ձևավորման աշխատանք կատարելու կարողություններ , • այգու հիվանդությունները, վնասատուներին և մոլախոտերը ճանաչելու և դրանց դեմ պայքարելու հմտություններ, • այգու խնամքի, ոռոգման, սնուցման և պարարտացման աշխատանքներ կատարելու հմտություններ • մշակաբույսերի բերքահավաքը և հետբերքահավաքային աշխատանքները ճիշտ կազմակերպելու հմտություններ, • օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվելու, առանց քիմիական կյուլթերի և հանքային պարատանյութերի, Էկոլոգիապես մաքուր բուսատեսակներ աճեցնելու հմտություններ:
VIII. Անձի որակական հատկանիշներ	<ul style="list-style-type: none"> • Հայրենասեր, • պատասխանատու, • պարտաճանաչ, • հաղորդակցվող,

	<ul style="list-style-type: none">• դիտողունակ,• ազնիվ,• գեղեցիկն ընկալող,• ներդաշնակությունը պատկերացնող• մաքրասեր,• բնությունը սիրող ու խնայող:
--	--